

Լ Ե Զ ՈՒ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ս Ն

Ա Ճ ՈՒ Մ Ը հայերէնի մէջ.

Աճում ասելով հասկացում է այն ե կամ ե ձայնաւորը, որ տեսնում ենք գրաբարի մէջ բայերի կատարեալ եզակի Գ. դէմքում, օր. եկաց, եառ, են: Մեր արդի գրական լեզուի մէջ աճումն իսպառ անհետացել է, սակայն բարբառներից ոմանց մէջ մնացել են նրա հետքերը, և հայ լեզուի պատմութեան մէջ ուշագրաւ տեղ են բռնում նրա ծագումն ու կրած կերպարանափոխութիւնները դարերի ընթացքում:

Աճումը ոչ այլ ինչ է բայց եթէ մի բարբառային երևոյթ հնդեւրոպական լեզուների մէջ: Միայն հնդիրանական ճիւղը, յունարէնն ու հայերէնն են, որոնց մէջ տեսնում ենք աճումի կիրարկութիւնը, առաջին երկուսի մէջ աւելի լայն չափով քան վերջինում, օր.

սանսկր. á-bharat «բերում էր»,

յուն. ἔ-φερε « » ,

հայ. ե-բեր.

Ինչպէս հաստատում են հնդիկ վեդան և յոյն Հոմերեան երկերը, աճումը իր սկզբնական շրջանում բայի անբաժան մի մասը չի կազմել, որովհետեւ այդ երկու հնագոյն յիշատակարաններում սլատահում են միևնոյն ժամանակի կրկնակ ձևեր—աճումով և առանց աճման, օր. վեդ. ábharat և bhárat, հոմ. ἔφερε և φέρε «բերում էր»:

Դասական հայերէնում, ինչպէս ցոյց են տալիս հնագոյն ձեռագրերը, աճման գործածութիւնը շատ կանոնաւոր էր 1) բաղաձայնով սկսող բայերի կատարեալի եզ. Գ. դէմքում, եթէ վերջինս ներկայացնում է միավանկ բուն, օր. ե-կաց, ե-բեր, են. 2) զամ, դեմ և ռամ բայերի կատարեալի բոլոր ձևերում անխտիր, բացառութեամբ յոգ. Ա. դէմք ռուս-ի. 3) Դեմ բայի ստորադասական կատարեալի (ապառնի) եզակի ա. դէմքում, կրաւոր. հրամ. կատարեալում և անցեալ դերբայում, և զամ բայի կատարեալի բնից կազմուած բոլոր ժամանակներում— եկից, եկ, եկեալ, են:

Ինչպէս տեսնում ենք, դասական հայերէնը, չհաշուելով յիշատակուած բացառութիւնները, աճման գործածութիւնը սահմանափակել է միայն կատ. եզակի Գ. դէմքում, որ ներկայացնում է կատարեալ (=aorist) ժամանակների բունը: Այդտեղ ի նկատի է առնուած երկու պարագայ — բնի միալանկութիւնն ու բաղաձայնով սկսուելը: Այնպիսի ձևեր, ինչպէս կսո, կոծ, կած. ևն, պատկանում են յետդասական շրջանին, այնպէս որ հայերէնում աճուճն խակապէս ե- է միայն և ոչ է: Վերջինս հետևանք է երկու ձայնաւորների իրար հանդիպման (հիատուս): Իսկ նախնական շրջանում աճուճն անհետացել կամ, լաւ ևս, ձուլուել է իրան յաջորդող ձայնաւորի հետ, ինչպէս տեսնում ենք սանսկրիտում և յունարէնում, օր. սանսկր. a'jāt, յն. դորէական բարբ. ἄγε, ատտիկ. γίγε, հայ. ած: Մեր արդի քերականագիրները չարաչար սխալուած են, երբ մեքենայօրէն վարդապետում են. ածի, ածեք, ած կամ կած, ածաք. ածեք, ածիք, կամ երբ ռուտցանում են. հասի, հասեք, հաս կամ եհաս, հասաք, հասեք, հասիք: Դասական շրջանում ոչ եւս կայ ոչ հաս: Նախնական սծ-ի հետեղութեամբ, յետդասական շրջանում, առաջացած է հաս և, փոխադարձաբար եհաս-ի հետեղութեամբ եւս (=ե-յ-ած): Դալով բնի միալանկութեան, վերջինիս խաղացած դերն ակներև է յատկապէս բաղաձայնով սկսուող բայերի մէջ: Կարծէք հայ ձայնարանութեան մէջ, որոշ դէպքերում, առանձին դեր է խաղում, ձևերի ամբողջութեան երաժշտականութիւնը: Աճման խնդրում, օրինակ, ցոյց է տրուած մի ձգտում կատարեալի դէմքերի մէջ պահպանելու որոշ ներդաշնակութիւն՝ նրանով որ, ինչքան հնար է, իւրաքանչիւր դէմք բաղկանայ ոչ պակաս քան երկու վանկից, օր. բերի, բերեք, եքեր, ևն. առում ենք՝ ինչքան հնար է, որովհետև կան դէպքեր, երբ անհնար է եզ. երրորդ դէմքում մէկ վանկից աւել սպասել, օր. եղի, եղեք, եղ. ևն: Պատճառն, աւելորդ է ասել, այս կարգի բների բացառիկ կազմն է, որ միևնոյն ժամանակ առաջ է բերել աճումի ծաւալում նաև ուրիշ ձևերում, եղի, եղից, եղեալ, ևն.

Զուտ դասական լեզուին յատուկ սոյն աճումից, օրի ծագումն, ինչպէս ասացինք, հնդեւրոպական է, բոլորովին անկախ առաջ է գալիս և զարգանում, յատկապէս հայ փիլիսոփաների ու քերականագիրների դպրոցում, մի այլ տեսակի աճում յունարէնի ճեակողութեամբ, որով և միանգամայն արժանի կոչուելու յունական աճում, օր. կկոփոցիւք, կկոփոցիւ, կկոփոցեք, կկոփոցիւք, կկոփոցիւք, փոխ. կոփեցի, կոփեցեք, ևն. կամ կարար =արար: Այս բռնադրօսիկ դրութիւնը բուն ազգային մտածողութեան վրայ չի արձագանգած, հետևապէս և մեր առաջադրած հարցի հետ ոչ մի կապ չունի:

ԺԲ. դարից մի նոր շրջան է սկսում աճումի պատմութեան համար: Նորութիւնը բացառապէս գամ, ցամ, դեեմ բայերի կատ. եզ. Գ. դէմքի վերաբերմամբ է առաջ գալիս: Այդ նոր աճումնաւոր ձևերն են. երեկ (= եկաւ), երե՞ս (= տուաւ), երեզ (= դրաւ):

Այս երեք ձևերի լուսարանութիւնը, որ գտնում ենք մասամբ կարստի աշխատութեան մէջ (Historische Grammatik des Kilikisch—Armenischen, էջ՝ 322—325), կարելի է ներկայումս լրիւ տալ արդի հայ բարբառների ընձեռած փաստերով: Եթէ յետզասական գրաբարում, իբրև աճում, զարգանալու էր մի և ձայնաւորով սկսող միավանկերից առաջ, այդ արդէն ապացոյց է, որ միավանկի ներկայութիւնը եզ. Գ. դէմքում անբնական էր թուելու:

Ահա այդ պատճառով մէջ կողմից կրաւորականի յատուկ — աւ վերջաւորութիւնն է տարածոււմ, օր. սեսաւ, հասաւ, ելաւ, են. միւս կողմից վերը յիշատակուած ձևերն են առաջ գալիս: Կիլիկեան շրջանում միավանկ բառերի սկզբին և ձայնաւորն արդէն եօզացել էր. ինչպէս արդի գրական լեզուի մէջ և՛ միավանկ և՛ բազմավանկ բառերի սկզբին, այնպէս որ դասական եկե, ես, եդ բառերն արտասանուելու էին yegh, yed, yet: Միևնոյն ժամանակ բացարձակ բաղաձայնով սկսող բառերից ե— աճումը դեռ բոլորովին չէր անհետացած, ինչպ. եբեր եզարկ, են: Այսպիսով միևնոյն ե— աճումն է, որ դրոււմ է yeg(n), yed, yet բառերի վրայ և ժամանակի ընթացքում ծնունդ տալիս երեկ, երե՞ս, երեզ ձևերին: Միջնորդական ձևերն ուրեմն եղած պէտք է լինին *եյեկ, *եյե՞ս, *եյեզ, որոնք չեն պահուած շատ հասկանալի պատճառով. հայերէնի համար էլ երկրաբառը ի հնուց անտի խորթ է, որի ապացոյցը հէնց է ձայնաւորի ներկայութիւնն է (ե = էլ):

Աճումնական այս երրորդութեան մէջ ամենից էական դերը խաղում է առաջինը՝ երեկ (դսկ. եկե). ահա թէ ինչպէս: Միջին դարերից զէտը կարծես սովորութիւն է դառել գնալ գալու զաղափարին զուգորդել ելնելու, վեր կենալու (դասակ. յառնել) զաղափարը, օր. ելաւ եկաւ, վեր կացաւ գնաց, արի եկ, են: Այս վերջին ձևի գործածութիւնը, այն է՝ յառնեմ բայի, մանաւանդ սրա հրամայականի զուգորդումն այն աստիճան սովորական երևոյթ է եղել, որ արդի արևելեան հայերէնում եկ, եկե՛ք, հրամայականները բոլորովին յապաւուկով միայն արի, արի՛ք բաւական են համարոււմ միևնոյն իմաստի արտայայտութեան համար: Հրամայական արի եկ—ը կիլ. հայերէնում ձայնաւորի սղումով վերածուած էր արեկ-ի, ինչպէս տեսնում ենք միջնադարեան տաղերում: Ահա սոյն արեկ հրամայականն է, որ կարող էր ազդել սահմ. կատարեալի վրայ և առաջ բերել *եյեկ-ից երեկ: Այս ենթադրութիւնը ոյժ է առնում Զուղայի բարբառից, ուր, դեռ ծերերի բերնում

արեկ (=արեկ) գործ է ածուով իբրև սահմ. կատարեալ, Կիլիկեան
 երեկ-ի իմաստով, օր. «... շահիցն չափար արեկ Ընէշոք: (Աճ:
 Ն. Բարբ. էջ՝ 90) Այսպիսով երեկ ձևի կազմութիւնից յետոյ, սրա
 ազդեցութեան տակ, առջանում են և միւս երկուսը՝ երեք և երեղ:
 Այստեղ ևս միևնոյն Ջուղայի բարբառը իր արեք (=արեք) ձևով,
 որ համապատասխանում է Կիլ. երեք-ին, և ուր պահպանուած է
 միևնոյն արե'կ (=արի ե'կ) հրամայականի ա-ը, զալիս է վկայե-
 լու, որ Ե-ի ազդիւրը պէտք է որոնել արե'կ կամ արի ե'կ հրա-
 մայականի մէջ:

Արդի բարբառներում դեռ չի անհետացել աճուով: Ջուղայի
 բարբառը, ինչպէս տեսանք, ունի արեկ և արեք: Թիֆլիսի բար-
 բառն ունի երիք (=երեք): Լոռիի ենթաբարբառում կայ երի
 (<*երիլ <*երիկ <երեկ) և երեղ: Բացի այս բայերից Թիֆլի-
 սում գործածական է նաև եբի (=եբեր) բերաւ-ի հետ միաժամա-
 նակ, ինչպէս նաև Լոռիում՝ եբեր (եբեր):

Ինչպէս լեզուական ամեն հրկոյթ, նոյնպէս և աճումը մի
 անգամից չի անհետում, այլ աստիճանաբար: Ջուղան, Թիֆլիսն
 ու Լոռին միասին ներկայացնում են աճումի անհետացման զա-
 նազան աստիճանները: Իսկ անհետացող աճումի տեղը բռնել է և
 բռնելու է, կրաւորականի -աւ վերջաւորութիւնը, ինչպէս պարզ
 տեսնում ենք Թիֆլիսում եբի և բերաւ կրկնակ ձևերից:

Մեսոպ վարդ. Մաթուղեանց

